

# ԲԱԶՄԱՎԵՊ

ԲԱԶՄԱՎԵՊ կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբն : Կը պարունակէ նախ Խմբագրական առաջնորդող յօդուած մը : յետոյ Հայ մատենադրական, ստուգաբանական, պատմական, լեզուաբանական, աշխարհագրական, հնախօսական յօդուածներ, եւ Հանդէս հանդիսից տիտղոսով գրական եւ բանասիրական թերթերու վրայ կարեւոր տեսութիւնք, եւ Ազգային քրոնիկ վերնադրով հետաքրքրական կարեւոր նոր տեղեկութիւնք մեր ժամանակակից դրական եւ ընկերական լրոց վրայ : ԲԱԶՄԱՎԵՊ այս տարուան իրբեւ նորութիւն, կը հրատարակէ թրքահայ գրական եւ այլ նշանաւոր անձանց համառու կենսագրութիւնը, յիշելով անոնց հեղինակութիւնք եւ տակելով անոնց կենդանագիրն : ԲԱԶՄԱՎԵՊ՝ նորատիպ մատենանները, զորս իրբեւ նուէր կ'ընդունի, հակիրճ քննադատականով մը կը հրապար սկէ : Բաց աստի կը հրատարակէ եւրոպական զասական ոտանաւորներու աշխարհաբար թարգմանութիւնք : Քաղաքական տեսութիւն եւ ազգային թերթերու քաղուածոյ ցանկն :

«Բազմավէպ»ի տարեկան գիրն է 10 ֆր. { 4 րըլ., 2 տոլար } : Հասցէն  
է՝ Rédaction du «Pazmavéb». St. Lazare, VENISE.

— Արդեօք հա՞րկ է ամէն անգամ կրկնել թէ «Բանասէր»ի տարեկան գիրնը կԱնինիկ պէտք է դրկեն մեր բաժանորդք : Աշխարհիս ո՞ր անկիւնը լսուած է որ թերթի մը բաժնեգիրնն ապառիկ լինի : Մենք այսուղ գրաշարի, տպարանի, թղթի, թղթատարի (նոյն խոկ բնակարանի) եւ յարակից ծախքերու համար ստիպուած ենք կԱնինիկ վճարել . ուստի կրնան երեւակայել մեր ընթերցողները թէ ինչ դժուար կացութեան մէջ կը գտնուինք երբ իրանց բարեհած կամքին կսպասենք հոս մեր վճարումները պատուաւոր կերպով կարենալ ընելու համար օտարաց առջեւ :

Անոնք որ «Բանասէր»ի անցեալ տարւոյ (1900 թ. տարի Բ) բաժնեգիրնը չեն վճարած զեւ, կը խնդրենք որ անյապաղ վճարնն իրենց պարտքը : Ամօթ է որ այսպէս հրապարակաւ կոչում՝ կընենք իրենց պարտականութեանցը . «արժանապատութիւնն» ըստու բանը չունինք մենք, Հայերս :

— «Բանասէր»ի Բովադակութեան մէջ ծանուցուած «Բննական Պամ. ԺԹ. դարու հայ պարութեան» գործը պիտի դրկենք մեր իամինիկ վճարող բաժանորդներուն միայն, «Բանասէր»ի յառաջիկայ պրակին հետ միասին, առանձին թղթակազմով :

— Կը Գնենք Սարգիս արքեպ. Զալալեանցի «Ճանապարհորդութիւնի Մեծն Հայ», երկու հատոր, եւ Արէլ վ. Մխիթարեանցի «Ճանապարհորդութիւն յԱնի» գրքերը . ունեցողները թող հաճին դրել մեզ եւ իմացունել գինը : Խմբագրութիւնն շատ երախտապարտ կը մնայ անոր որ այս գրքերը կը հայթայթէ եւ կը զբկէ մեզ, անշուշտ վճարմամբ :

ԽՄԲ. «ԲԱՆԱՍԷՐ»Ի